

## **Վճռաբեկի դատարանի 10-ամյակը**

Երեկ ՀՀ վճռաբեկ դատարանի կազմավորման 10-ամյակի առթիվ «Սարիոթ» հյուրանոցի «Տիգրան Մեծ» սրահում հրավիրվել էր սեմինար՝ «Բարձրագույն դատական ատյանների դերը արդարադատության կայացման ճանադարհին» խորագրով: Սեմինարին մասնակցում էին ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահ Հովհաննես Մանուկյանը, Վճռաբեկ դատարանի քրեական դալատի նախագահ Դավիթ Ավետիսյանը, Քաղաքացիական եւ վարչական դալատի նախագահ Արման Մկրտումյանը, ինչդեռ նաեւ ՌԴ գերագույն արբիտրաժային դատարանի, Բելառուսի Վիտեբսկի շրջանի տնտեսական դատարանի, Գերմանիայի Հեսսենի գերագույն վարչական դատարանի նախագահները եւ Դատավորների միջազգային միության նախագահ Մայա Տրատնիկը: Պալատի նախագահները հանդես եկան զեկույցներով՝ նվիրված ՀՀ վճռաբեկ դատարանի գործառույթներին, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններին եւ այլն: Նշվեց, որ ՀՀ վճռաբեկ դատարանի մասնույի ծառայությունն ունի դաշտոնական կայքէջ, որտեղ անդրադառնում են նաեւ հասարակական հնչելություն ունեցող գործերին: ՀՀ վճռաբեկ դատարանի 10-ամյակի միջոցառումները շարունակվեցին «Արամ Խաչատրյան» համերգասրահում: